Հայկազոյ, որ գնամք ի Սպահան, քարոզեմք Ջուղայեցւոցն...: Այն ատեն կաթողիկոսքն կամ սիրով հրաժարել, անապատ մտանել, ապա թէ բուռն իշխանութեամբ ընդդիմանայ՝ մահացուցանել կամք լիցի՝ թէ Ջուղայեցիքն մխարանին ընդ մեզ» (տե՛ս էջ 32): Մորհուրդս՝ այն իմաստով ինչպէս ունինք մեր առջեւ անչուշտ սարսռելի է, բայց հաւանական է կարծել թէ խորհուրդի որոշումն եղած է «մահացուցանել», չեղոքացնել անոնց իրաւական իշխանութիւնն կամ կաթողիկոսութիւնը: Այնքան անսանելի նկատուած էր դրութիւնը:

Բայց հնարաւոր չեղաւ ի գլուխ հանել խորհուրդը: Մելքիսեդեկ վերահասու ըլլալով իրեն դէմ լարուած խորհուրդներուն՝ յանձն առաւ ոչ միայն 300 թուման տուգանքը վճարել, այլ եւ պատրաստ ընծայեց ինք ինքը իշխանութեան տիրանալու համար ամ յամէ վճարել արքունի գանձարանին յանուն Էջմիածնի Աթոռին 100 թուման. որով հաճոյացաւ արծաթասէր Շահին եւ ապահովեց իրեն Աթոռը: Այս յանձնառութիւնը սակայն ստեղծեց սարսափելի կացութիւն մը նոյն իսկ Մելքիսեդեկի համար: Որպէս զի ապահովութեամբ գանձուի այս տուրքը, Շահը նշանակած էր կաթողիկոսին վրայ հսկող չորս պարսիկ «ղուլեր», որոնք կաթողիկոսին հետ պիտի չբլէին եւ անոր հաշուին պիտի պահէնաւորուէին: Ասոր հետեւանքն եղաւ, որ